Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ԵՐԵՎԱՆ 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

Օգնություն դասախոսին

Б
3015

Լ. Ա. ՎԱԳՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

ԸՆԹԵՐՑՎԱԾ Է ԼՈՒՍՍԱ ԸՆԴ ՀԱՄԱՐ
«15» հունվար 1955 թ.

ԵՐԵՎԱՆ

1955

Гос. Библиотека
ЛССР—Арм. ССР
им. А. Мясн...
ВАНАНДЕЦИ ...

31770.62

Л. А. ВАГНЕР

ОВАНЕС АЙВАЗОВСКИЙ

(На армянском языке)

Ереван—1955



Հ. Կ. Այվազովսկու դիմանկարը (գործ՝ Պետրոս Ադամյանի) և ֆակսիմիլեն

Սույն 1955 թվականին լրանում է մեծ ծովանկարիչ Հ. Կ. Այվազովսկու մահվան հիսունհինգամյակը (մայիսի 2-ին) և Թեոդոսիայում նրա հիմնադրած Պատկերասրահի յոթանասունհինգամյակը (օգոստոսի 1-ին)։

Լինելով ռուսական ծովանկարչության խոշորագույն վարպետը, Հ. Կ. Այվազովսկին պատվավոր տեղ է գրավում նաև հայկական արվեստի մեջ։ Նա մեծ ծառայություններ է մատուցել հայկական արվեստի զարգացման և ռուս ու հայ ժողովուրդների դարավոր բարեկամական կապերն է՛լ ավելի ամրապնդելու գործում։

Հ. Կ. Այվազովսկին եղբայրական երկու ժողովուրդների՝ ռուսների և հայերի պարծանքն է։

Սույն դասախոսության տեքստի հրատարակումը մեր դասախոսներին կօգնի մեծ արվեստագետ-հայրենասերի կյանքն ու ստեղծագործությունը լայնորեն ժողովրդականացնելու մեր ռեսպուբլիկայի քաղաքների ու գյուղերի աշխատավորների շրջանում։

Հայկ. ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության
Կենտրոնական դասախոսական բյուրո

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Թեոդոսիան՝ Ղրիմի ծովափնյա այդ փոքր քաղաքը, անցյալ դարի սկզբին ոչ մի բանով ուշագրավ չէր։ Միայն միջնադարյան աշտարակների ավերակներն էին հիշեցնում այն մռայլ ժամանակների մասին, երբ այդտեղ իշխում էին Ճենովացի, իսկ նրանցից հետո՝ թաթար ու թյուրք նվաճողները, որոնք Կաֆուն,— այդպես էր կոչվում Թեոդոսիան միջին դարերում,— դարձրել էին ստրկավաճառության կենտրոն։ 18-րդ դարի վերջում Կաֆուի դժբախտ բնակչությունը, որոնց մեջ քիչ չէին հայերը, Ռուսաստանի շնորհիվ ազատագրվեց։ Բազմադարյան տառապանքներից հետո Թեոդոսիան Ռուսական պետության կազմում սկսեց ուշքի գալ։ Սակայն այդ փոքր քաղաքը, այնուամենայնիվ, ցարական Ռուսաստանի սովորական մի ծայրամասն էր։ Հավանական է, որ Թեոդոսիան այդպես անհայտ էլ մնար, եթե այդտեղ 1817 թվականի օգոստոսի 1-ին (նոր տոմարով) Կոնստանտին Գայվազովսկու հայ ընտանիքում չծնվեր փոքր տղան՝ Հովհաննեսը (Իվանը), հետագայի մեծ ծովանկարիչը, որը ծովանկարչության մեջ գերազանցեց բոլոր իրեն նախորդներին ու ժամանակակիցներին։

Նկարչի նախահայրերը, հազարավոր հայ ընտանիքների օրինակով, 18-րդ դարի սկզբին Թյուրքիայից գաղթել են Գալիցիա։ Այստեղից էլ գալիս է նրանց ազգանվան լեհական վերջավորությունը[1]։

---

[1] 1842 թվականին նկարիչը դյուրահնչյունության համար սկսեց ստորագրել Айвазовский։

Նկարչի հայրը արտասովոր ընդունակությունների տեր մարդ էր. նա կատարելապես տիրապետում էր հայերեն, ռուսերեն, գերմաներեն, լեհերեն, ուկրաիներեն, թյուրքերեն և մի շարք այլ լեզուների։ 19-րդ դարի սկզբներին նա տեղափոխվում է Թեոդոսիա։ Կոնստանտին Այվազովսկին զբաղվում էր առևտրով և բավականին ունևոր մարդ էր, բայց 1812 թվականի ժանտախտի ժամանակ բոլորովին սնանկանում է։ Ընտանիքի աղքատ վիճակն այնպիսի չափեր է ընդունում, որ ապագա նկարչի մայրը ստիպված է լինում աշխատել հարուստների տներում։

Փոքր Հովհաննեսի նկարչական ու երաժշտական հակումները սկսում են հանդես գալ շատ վաղ։ Նա ածուխով նկարում է տների պատերին, որովհետև ծնողները շնորհալի երեխայի համար թուղթ ու մատիտ գնելու միջոցներ չունեին։ Հենց մանուկ հասակում էլ Այվազովսկին սովորում է ջութակ նվագել։

Դժվար է կռահել, թե ինչպես կդասավորվեր նկարչի բախտն այն հեռու, դժվարին անցյալում։ Լավ հայտնի է, թե քանի՞-քանի տաղանդավոր, շքավոր մարդիկ են կործանվել այն ժամանակ Ռուսաստանում, և ոչ միայն Ռուսաստանում, այլև Արևմուտքի և Արևելքի բոլոր երկրներում։

Թե՛ Այվազովսկու և թե՛ արվեստի բախտից նրա ընդունակությունները աննկատ չեն մնում և 1830 թվականին նա տեղավորվում է Սիմֆերոպոլի գիմնազիայում, իսկ երեք տարի անց՝ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում։ Նա այն ժամանակ 16 տարեկան էր։ Այվազովսկին Պետերբուրգ է մեկնում Նիկոլաևյան ռեակցիայի տարիներին։ Դեկաբրիստների նկատմամբ դատաստան կատարելուց հետո, Ռուսաստանում հաստատվում է դաժան տեռոր։ Ազատ մտքի ամեն մի դրսևորում դաժանորեն հետապնդվում էր ցարիզմի կողմից։ Նիկոլայ Առաջինը երկիրը հեղեղել էր ժանդարմներով։ Ժանդարմների շեֆ Բենկենդորֆը ցարին ավելի մոտ էր կանգնած, քան բոլոր մինիստրները, և Նիկոլայ Առաջինից հետո փաստորեն հանդիսանում էր երկրում ամբողջ քաղաքական կյանքի տնօրինողը։ Ռուսական գիտությունը, գրականությունն ու արվեստը ռեակցիոն գրաքննության խստագույն վերահսկողության տակ են ընկնում։ Նիկոլայ Առաջինն իրեն հայտարարում է Պուշկինի գրաքննիչը։ Թագադրված այդ բիրտ զինվորը, քայլամարզության ու հրապարակային զորահանդեսների մեծ վարպետը, իրեն համարում էր

գրականության ու արվեստի գիտակ։ Նա սանձարձակ լկտիությամբ գրական խորհուրդներ էր տալիս մինչև իսկ իրեն՝ Պուշկինին, միջամտում էր Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայի բեմադրությանը։

1829 թվականին Գեղարվեստի ակադեմիան ենթարկվում է անձամբ Նիկոլայ Առաջինին։ Այդ բանը հղի էր ծանր հետևանքներով Ակադեմիայի ամբողջ կյանքի համար։ Ցարը բիրտ կերպով հարձակվում էր լավագույն պրոֆեսորների վրա, նրանց անձամբ նկատողություններ էր հայտարարում, անձամբ գնահատում էր արվեստի գործերի արժանիքները, վճռում նկարիչների բախտը։ Ականավոր շատ պրոֆեսորների Նիկոլայը հեռացնում է Ակադեմիայից, ինչպես օրինակ, Անդրեյ Իվանովին (հռչակավոր նկարիչ Ալեքսանդրը Իվանովի հայրը), Եգորովին, Պիմենով-ավագին և շատ ուրիշների։ Ռուսաստանի պատմության այդ զարհուրելի ժամանակի մասին Գերցենը գրում է. «Ամեն ինչ մեխված էր հողին։ Խոսելը վտանգավոր էր, դե՛, խոսելու բան էլ չկար»։

Ցարիզմի քայքայիչ ազդեցության ներքո Ակադեմիայի արվեստը սկսում է արագորեն քայքայվել և ավելի ու ավելի հեռանալ կյանքից, իրականությունից։ Սակայն ռեակցիային չի հաջողվում խեղդել նոր դեմոկրատական արվեստի սաղմնավորումը։ Ռուսական գեղանկարչության մեջ նոր ուղիներ են բաց անում այնպիսի նկարիչներ, ինչպես՝ Սիլվեստր Շչեդրինը, Ալեքսեյ Վենեցիանովը, Կարլ Բրյուլովը և ուրիշներ։

Այվազովսկու Ակադեմիա ընդունվելու իսկ տարին Բրյուլովն ավարտում է «Պոմպեյի վերջին օրը» իր հայտնի պատկերը, որը խանդավառությամբ է դիմավորվում Ռուսաստանում և Եվրոպայում։

Գերցենն ասել է, որ այդ պատկերը կարող էր ստեղծել միայն ռուս նկարիչը, Նիկոլայի թագավորության տարիներին։ «Այդ՝ Պետերբուրգի ոգեշնչումն է»— հայտարարել է Գերցենը։ Նա ասում էր, որ մեր դարաշրջանի 1-ին դարում Վեզուվի այդ զարհուրելի ժայթքումը, որը պատկերված է նկարում, յուրովի առանձնահատկությամբ արտացոլում է Նիկոլայ Առաջինի սարսափելի թագավորությունը՝ Ռուսաստանում։

Այդպիսին էր արվեստի այդ մեծ երկի իմաստը, նրա սոցիալական նշանակությունը։ Բրյուլովի պատկերին բարձր գնահատական են տվել Պուշկինը, Գոգոլը և ռուսական կուլտուրայի մյուս ականավոր ներկայացուցիչները։ Չնայած այն բանին, որ «Պոմպեյի

վերջին օրը» դեռ շատ բանով շարունակում էր ակադեմիական գեղանկարչության տրադիցիաները, այնուամենայնիվ նրա մեջ զգացվում էր ինչ-որ նոր, համարձակ բան։ Բրյուլովը առաջինը պատմական կտավում ցույց տվեց ոչ թե «հերոսների», ոչ թե պատմական անձնավորությունների, այլ ժողովրդին, նրա ողբերգական ճակատագիրը։ Թեկուզ միայն դա կարող էր այդ գործի համար ապահովել անմահ փառք։ Բայց, բացի այդ, նկարը մինչև այժմ էլ զարմացնում է հուզական ներգործության իր ուժով։

Ակադեմիայում Այվազովսկու ուսուցիչն էր հայտնի պեյզաժիստ պրոֆեսոր Մ. Ն. Վորոբյովը։ Սակայն նրա գեղարվեստական զարգացմանն ավելի է նպաստել Կարլ Բրյուլովի հետ մերձենալը։

Այվազովսկին իր կյանքի ամբողջ ընթացքում գտնվում էր Բրյուլովի պատկերի հմայքի տակ։ 19-րդ դարի 80-ական թվականներին, արդեն համաշխարհային հռչակ ստացած նկարիչ լինելով, Այվազովսկին, ասես «Պոմպեյի վերջին օրը» պատկերի տպավորության տակ, ստեղծում է համանման սյուժեներով մի շարք գործեր՝ «Վեզուվի առաջին ժայթքումը», «Հերկուլանումի և Պոմպեյի կործանումը», «Պոմպեյի կործանումը»։

Բրյուլովն առաջադեմ մարդ էր։ Նա մոտ էր Պուշկինին, Գլինկային և ռուսական կուլտուրայի մյուս ականավոր գործիչներին։ Այդ նա էր, որ վճռեց Տարաս Շևչենկոյի բախտը. նկարեց բանաստեղծ Ժուկովսկու դիմանկարը և վաճառքից ստացված դրամով ճորտային անազատությունից փրկագնեց ուկրաինական բանաստեղծին ու նկարչին։

Այվազովսկու փայլուն տաղանդն անմիջապես գրավեց նրա ուշադրությունը։ Բրյուլովն Այվազովսկուն տվեց ոչ միայն հոյակապ վարպետություն ու հիանալի տեխնիկա, այլև նրան մտցրեց Գլինկայի շրջանը, որտեղ լինում էին Ժուկովսկին, Կռիլովը և ուրիշ գրողներ, երաժիշտներ, նկարիչներ։ Գլինկան բարձր գնահատական է տվել Այվազովսկու նվագին ջութակի վրա և նրա երաժշտական ճաշակին։

Ռուս մեծ կոմպոզիտորն իր «Հիշողություններում» գրել է. «Այվազովսկին... ինձ հաղորդեց երեք եղանակ, հետագայում դրանցից երկուսը ես օգտագործեցի լեգգինկայի համար, իսկ երրորդը՝

«Ռուսլան և Լյուդմիլա» օպերայի երրորդ ակտում Ռոսմիրի տեսարանի andante-ի (դանդաղ նվագ) համար։

Ակադեմիայի ցուցահանդեսներում Այվազովսկու ձեռք բերած առաջին նշանակալից հաջողությունները բացատրվում են, իհարկե, նրա շնորհալիությամբ, ինչպես նաև նրանով, որ նա յուրացնում էր ժամանակի առաջավոր իդեաները, շփվում էր Ռուսաստանի լավագույն մարդկանց հետ։

Ուշագրավ է հետևյալ փաստը։ 1835 թվականին Ակադեմիայի ցուցահանդեսում Այվազովսկին ցուցադրում է իր «Էյուդ. օդը ծովի վրա» աշխատանքը։ Էյուդն արժանանում է բոլորի ուշադրությանը և Ակադեմիայի խորհուրդը 18-ամյա նկարչին պարգևատրում է արծաթե մեդալով։ Սակայն երիտասարդ ծովանկարչի հաջողությունը առաջ է բերում ֆրանսիական ծովանկարիչ Տաննների չար նախանձը, որին դրանից քիչ առաջ Պետերբուրգ էր հրավիրել Նիկոլայ Առաջինը։ Տաննները չէր հաշտվում այն մտքի հետ, որ ռուսական Ակադեմիայի աշակերտն իրեն գերազանցել է, և սկսում է պալատական շրջաններում ինտրիգներ լարել Այվազովսկու դեմ։ Այդ ինտրիգների արդյունքը լինում է այն, որ Նիկոլայ Առաջինը հրամայում է ցուցահանդեսից հանել Այվազովսկու գործը։

Միայն Կռիլովի, Ժուկովսկու, Ակադեմիայի պրոֆեսոր Զաուերվեյդի եռանդուն միջամտությունն Այվազովսկուն փրկում է ցարի «շնորհազրկությունից», ինչը երիտասարդ նկարչի համար կարող էր ողբերգորեն վերջանալ։

1836 թվականի ցուցահանդեսը Այվազովսկուն բերում է մեծ ուրախություն։ Այդ ցուցահանդեսում նա հանդիպում է Պուշկինին, որը, բարձր գնահատելով նրա պատկերները, երկար և սրտանց զրուցում է նրա հետ։ Այվազովսկին այդ հանդիպման հիշողությունը վառ է պահում իր ամբողջ կյանքում։ Հետագայում նա տաս անգամ պատկերել է Պուշկինին, մեկ անգամ էլ՝ Ռեպինի հետ միասին։ Ռուս գեղանկարիչներից ոչ ոք այդքան շատ չի դիմել մեծ բանաստեղծի պայծառ կերպարի պատկերմանը։

Երիտասարդ Այվազովսկու ստեղծագործությունների մասին միայն նկարիչների և գրողների նեղ շրջանում չէ, որ գիտեին։ Դրանց մասին սկսում է խոսել Պետերբուրգի մամուլը, մանավանդ «Художественная газета»-ն։

1837 թվականին գեղանկարչության մեջ ձեռք բերած հաջողու-

թյունների համար Այվազովսկին պարգևատրվում է առաջին կարգի ոսկե մեդալով։ Այդ նրան իրավունք է տալիս Ակադեմիայի հաշվին արտասահման ճանապարհորդել։ Բայց դրանից առաջ նա երկու տարով գնում է հայրենի Ղրիմ։ Հայրենիքում նա աշխատում է շատ և արդյունավետ։

Այդ ժամանակին է վերաբերում նրա մասնակցությունը՝ Կովկասի ծովափին Սուքաշի գետի հովտում ռուսական զորքերի դեսանտին։ Նրան, որպես նկարչի, դեսանտին մասնակցելու է հրավիրում Պուշկինի բարեկամ, Կովկասյան առաջին գծի պետ գեներալ Ն. Ն. Ռևևկին։ Այդտեղ նա ծանոթանում է ռուս նշանավոր նավատորմավարներ Լազարևի, Կոռնիլովի, Նախիմովի հետ. նրանց միջև հաստատվում են բարեկամական հարաբերություններ։ Իր «Ինքնակենսագրության» մեջ Այվազովսկին նաև հիշատակում է Սուքաշիի ժամանակ զինվորի աստիճանի իջեցված դեկաբրիստներ Նարիշկինի, Օդոևսկու, Լորերի հետ ունեցած հանդիպումների մասին։ Նրանց հետ ունեցած հանդիպումներից շատ տարիներ անց Այվազովսկին ասել է. «Ես ծանոթացա և մեծ հաճույքով զրուցում էի այդ բարձրակիրթ մարդկանց հետ»։

Այսպիսով, ավելի քան ակներև է, որ Այվազովսկու աշխարհայացքը ձևավորվել է առաջադեմ Ռուսաստանի, նրա դեմոկրատական կուլտուրայի ազդեցության տակ։

1840 թվականին Այվազովսկին գնում է Իտալիա։ Այդտեղ նա հաճախակի հանդիպում է Ն. Վ. Գոգոլի և ռուս մեծ նկարիչ Ալեքսանդր Իվանովի հետ։

Իտալիայում Այվազովսկին ուսումնասիրում է իտալական գեղանկարչությունը և շատ է աշխատում։ Երկու տարվա ընթացքում նա նկարում է 40 խոշոր ու բազմաթիվ փոքր գործեր։ Նկարիչն ինքնամոռացությամբ էր նվիրվում ստեղծագործական աշխատանքին։ Հետագայում նա ասել է. «Ապրել՝ ինձ համար, նշանակում է աշխատել»։ Վիթխարի էր նրա աշխատունակությունը. իր ամբողջ կյանքում նա ստեղծել է ավելի քան 6 հազար պատկեր։

Կարճ ժամանակամիջոցում Այվազովսկին դառնում է ամենահռչակավոր նկարիչն Իտալիայում։ Նրա ստեղծագործություններով զմայլվում էին. թերթերը նրա մասին գրում էին խանդավառ հոդվածներ։ Ռուս նկարիչ-փորագրող Ֆ. Իորդանը, որն այն ժամանակ Հռոմում էր ապրում, գրել է. «Դեռ նոր հասած լինելով Հռոմ, նա

(Այվազովսկին—Լ. Վ.) նկարեց երկու պատկեր՝ «Անդորրը ծովում» և փոքր չափի «Փոթորիկը». հետո հանդես եկավ երրորդ պատկերը՝ «Ծովափը»։ Այդ երեք պատկերները Այվազովսկուն արժանացրին Հռոմի ու նրա հյուրերի համընդհանուր ճանաչմանը։ Նկարիչներից շատերն սկսում են ընդօրինակել Այվազովսկուն։ Մինչև նրա ժամանելը Հռոմում ծովանկարչությունը հայտնի չէր, իսկ նրա գալուց հետո յուրաքանչյուր կրպակ զարդարվում էր ծովի «ա-լյա Այվազովսկի» պատկերներով։

Արտասահմանում Այվազովսկու ձեռք բերած հաջողությունների մասին գրում էին ռուսական լրագրերը։ Իսկ ինքը՝ Այվազովսկին հանդես էր բերում աղնիվ համեստություն, այդ գովասանքները վերագրելով ոչ այնքան իրեն, որքան ռուսական արվեստին։

Ականավոր անգլիական ծովանկարիչ Ջ. Տյորները, որը 1842 թվականին Հռոմ էր այցելել, Այվազովսկու նկարներից այնպես է հուզվում, որ նրան է նվիրում իտալերեն լեզվով մի բանաստեղծություն. «...Մեծ նկարիչ... քո աշխատանքն ինձ գերեց և ինձ համակեց բերկրանքը,— գրել է Տյորները։— Քո վարպետությունը բարձր է ու հզոր, որովհետև քեզ ոգեշնչում է հանճարը»։

Ոչ միայն Իտալիայում, այլև Եվրոպայի մյուս երկրներում, որտեղ Այվազովսկին ցուցադրում է իր նկարները, նրան ուղեկցում է չտեսնված հաջողությունը։ Հենց նույն Իորդանը գրել է. «Նրա փառքը թնդաց ամբողջ Եվրոպայով մեկ և տաղանդավոր արտիստին բերեց առատ հունձ։ Նույնիսկ ինքնավստահ Փարիզն էլ զմայլվում էր նրա պատկերներով...»։

Այվազովսկին այցելում է եվրոպական մի շարք պետություններ և ամենուրեք նրան ողջունում են որպես խոշորագույն ծովանկարչի։ Ամստերդամում՝ ծովային գեղանկարչության հայրենիքում, 27-ամյա Այվազովսկուն շնորհվում է ակադեմիկոսի կոչում։ Այվազովսկին, իբրև Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի թոշակառու, իր առաջին արտասահմանյան գործուղմանն է մեկնում գեղարվեստի մեջ կատարելագործվելու։ Իսկ հայրենիք է վերադառնում որպես ամբողջ Եվրոպայում ճանաչված մեծ ծովանկարիչ։

Այդ տարիներին ձևավորվում է Այվազովսկու ստեղծագործա-

կան մեթոդը, որին նա հարազատ է մնում իր նկարչական գործունեության ամբողջ ընթացքում։ Այդ մեթոդի առանձնահատկություններն ամենայն մանրամասնությամբ շարադրել է Լ. «Ինքնակենսագրության» մեջ ինքը՝ նկարիչը։ Բերում ենք այդտեղից մի քանի հատվածներ.

«Այն մարդը, որ օժտված չէ կենդանի բնության տպավորությունը պահպանող հիշողությամբ, կարող է լինել գերազանց ընդօրինակող, կենդանի ֆոտոապարատ, սակայն իսկական նկարիչ՝ երբեք։

Կենդանի տարերքի շարժումներն անորսալի են վրձինի համար. կայծակը, քամու թափը, ալիքի ծփանքը չի կարելի նկարել բնականից, դրա համար էլ նկարիչը պետք է դրանք հիշի...։ Իմ երևակայությունը իրական տպավորությունների զգացումից ավելի ուժեղ է։ Նրանք իմ հիշողության մեջ գրանցվում են ասես ինչ-որ գաղտնագրի թանաքով, որն ամենայն պարզությամբ ի հայտ է գալիս ժամանակի ընթացքում կամ ոգևորության վառ ճառագայթումից։ Իմ գեղարվեստական գործունեության 40 տարիների ընթացքում ես նկարել եմ շատ պատկերներ, որտեղ կենտրոնացված են իմ կյանքի զանազան ժամանակաշրջանների և զանազան վայրերի հիշողությունները կենդանի բնության մասին»։

Նկարչի այս և նման հայտարարությունները լուրջ վիճաբանություն են առաջացրել նրա ստեղծագործական ժառանգության ու մեթոդի շուրջը։ Շատերը նույնիսկ Այվազովսկուն մեղադրել են իրականության ուսումնասիրությունը մշտապես անտեսելու մեջ։ Նույնիսկ մեր ժամանակ Այվազովսկու արվեստն ուսումնասիրողներից ոմանք կրկնում են նույն մեղադրանքները։ Միայն պետք է ափսոսալ, որ Այվազովսկու այդ քննադատները չեն հասկացել նրան։ Նկարչի այստեղ մեջ բերված վկայություններից երևում է, որ նա, ընդհակառակը, մշտապես դիմում է հենց «կենդանի բնության մասին» իր հիշողություններին։ Հայտնի է, որ Այվազովսկին դրսում համարյա երբեք չէր բաժանվում ալբոմից կամ ծոցատետրից, որոնց մեջ ճեպանկարներ էր անում ու նյութեր հավաքում ապագա պատկերների համար։ Կարևոր է նշել, որ ինքը՝ մեծ ռեալիստ Ն. Վ. Գոգոլը, որի հետ շփվելը Այվազովսկու համար անհետք չի անցել, խորհուրդ էր տալիս սեփական հիշողությանը դիմել։ Նա գրել է. «...Հավաքել հիշողության մեջ նրանց (այսինքն մարդկանց—Լ. Վ.) մեջ եղած բոլոր լավագույնը, վերհիշել ավելի լավ, քան ամենամերձավորներիդ, և սիրո ուժով ոգեշնչված՝ ուժ ունենալ պատկերելու»։ Այվազովսկու խոստովանությունները չեն հակասում Գոգոլի սկզբունքին։

1844 թվականին, Պետերբուրգ վերադառնալուց հետո, Այվազովսկուն ընտրում են ակադեմիկոս ու շնորհում Ծովային Գլխավոր շտաբի առաջին գեղանկարչի կոչումը։ Երիտասարդ նկարչին շրջապատում են փառքն ու ճանաչումը, նրան շատ պատվերներ են տրվում, ազնվականները ձգտում են ծանոթանալ նրա հետ։

Բայց Այվազովսկուն փառքը չի շլացնում և նա ամենից քիչ կապեր է պահպանում Պետերբուրգի ավագանու հետ, որը ձգտում էր իր երեկույթներն ու հրավիրովի ճաշկերույթները զարդարել նրա ներկայությամբ։

Արտասահմանից վերադառնալուց հետո Այվազովսկին ավելի շատ է մերձենում ռուսական կուլտուրայի առաջավոր ներկայացուցիչների, առանձնապես մեծ քննադատ Վ. Գ. Բելինսկու հետ։ Զառամած հասակում Այվազովսկին վերհիշում է այդ հանդիպումների ու իրեն վրա ռուս հանճարեղ մտածողի գործած ազդեցության մասին։ «Վիսարիոն Գրիգորևիչ Բելինսկու հետ,— գրել է նա 1889 թվականին,— ես շատ անգամ եմ հանդիպել Պետերբուրգի գրական խմբակներում, իսկ մեկ անգամ, Ա. Պուշկինի հետ ծանոթանալուցս մի քանի տարի անց, արտասահմանից վերադառնալուցս հետո, մեծ քննադատի մահից փոքր-ինչ առաջ, իր հրավերով եղել եմ նրա մոտ՝ Լիգովսկայա փողոցի վրա»։ Եվ հենց այդտեղ էլ Այվազովսկին նշում է այն կարևոր նշանակությունը, որ ունեցան նրա համար հանդիպումները Բելինսկու հետ, «որը խմբակներում ունեցած մեր տաք զրույցների ժամանակ ինձ ներշնչում էր այնքա՜ն ազնիվ, գեղեցիկ մտքեր»։

Սակայն այդ ի՞նչ մտքեր էին, որ ամբողջ կյանքում մեխվել էին Այվազովսկու հոգու և գիտակցության մեջ։

Մեծ դեմոկրատ-քննադատը մարտնչում էր արվեստի ժողովրդականության ու ռեալիզմի համար։ Նա անհաշտ պայքար էր մղում «մաքուր արվեստի» իդեալիստական տեսության դեմ, այն համարելով ժողովրդի համար վնասակար։ Այդ ռեակցիոն տեսությունը ջախջախելով, նա գրել է. «Հասարակական շահերին ծառայելու իրավունքն արվեստից խլել՝ նշանակում է ոչ թե բարձրացնել այն, այլ նսեմացնել, որովհետև դա նշանակում է այն զրկել ամենակեն-

դանի ուժից, այսինքն՝ գաղափարից, դարձնել ինչ-որ փափկամոլության առարկա, դատարկամոլ ծույլերի խաղալիք»։

Այվազովսկին ծանոթ էր Բելինսկու մերձավորագույն աշակերտների ու ընկերների՝ Ի. Ս. Տուրգենևի, Ն. Ա. Նեկրասովի և ուրիշների հետ։ Դարաշրջանի ամենաառաջավոր մարդկանց հետ ունեցած այդ մտերմությունը Այվազովսկուն նախապատրաստեց գեղանկարչության այնպիսի հռչակավոր գործ ստեղծելու համար, ինչպիսին հանդիսացավ «Իններորդ ալիքը»։



Նկ. 1
Իններորդ ալիքը

Պատկերում վեր են խոյանում ալիքների կատարները։ Դեպի առաջին պլան է սլանում ամենից մեծ, ամենից ահռելի՝ իններորդ ալիքը։ Ջուրն ահեղորեն վեր է բարձրանում։ Օդը հագեցած է ջրի փոշիով։ Կայմի բեկորների վրա՝ խորտակված նավից փրկված մարդկանց փոքրիկ ֆիգուրները։ Բայց սարսափելի գիշերն անցել է և հորիզոնից ծագում է արևը։ Ծովը կախարդական է դառնում։

31770-62

Ջուրը թափանցիկանում, շողշողում է ծիածանի բոլոր գույներով։ Լույսն արիության ու հույսի շիթ է սփռում։ Այդ մարդիկ կփրկվեն։ Նկարիչը մարդու կամքը, եռանդը հակադրում է բնության ուժերին։

Նույնիսկ գեղանկարչության մեջ ոչ հմուտ մարդու համար միանգամայն ակնբախ է նկարչի վերապրած հուզմունքը, նրա երկյուղը նավաբեկությունից տուժածների վիճակի համար և նրա ուրախությունը՝ այն հավատի գիտակցությունից, որ նրանք հաղթել են տարերքի դեմ մղած մենամարտում։

«Իններորդ ալիքը» երկի սյուժեի ռոմանտիկական վեհ տրամադրությունը և մարդու ուժերի նկատմամբ ունեցած լավատեսական հավատը այն անմիջապես դրեցին ռուսական ու համաշխարհային գեղանկարչության հռչակավոր երկերի շարքը։ Պատահական չէ, որ «Իններորդ ալիքը» դեմոկրատական դիտողի վրա ավելի ուժեղ տպավորություն էր թողնում, քան Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը»։

Գեղանկարչության մի այդպիսի հումանիստական գործ կարող էր հանդես գալ այն ժամանակ (պատկերը նկարված է 1850 թվականին), երբ ռուսական գրականության ու արվեստի մեջ սկսել էր արթնանալ լայն հետաքրքրություն դեպի հասարակական կյանքը, դեպի հասարակ մարդու ճակատագիրը։

Արտասահմանից վերադառնալուց որոշ ժամանակ անց Այվազովսկին բնակություն է հաստատում հայրենի Թեոդոսիա քաղաքում։ Այնտեղ նա 1845 թվականին կառուցում է տուն, որտեղ անց է կացնում իր կյանքի մեծ մասը։

Թեոդոսիայի իր արվեստանոցում նկարիչը կերտում է հազարավոր ստեղծագործություններ, որոնք այժմ գտնվում են թե՛ Սովետական Միությունում և թե՛ արտասահմանում։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես հերոսական Սևծովյան նավատորմի սխրագործություններին նվիրված գործերը։ Ինչպես մենք արդեն ասել ենք, նկարիչը երիտասարդ հասակում մասնակցել է Սուքաշիի մոտ տեղի ունեցած ռազմական գործողություններին։ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853—1855 թ. թ.) Այվազովսկին այցելում է պաշարված Սևաստոպոլը։ Նավատորմի և նկարչի միջև բարեկամություն է հաստատվում Այվազովսկու ստեղծագործության արշալույսին և շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում։ Այդ բանը լավ երևում է նկարչի 73-ամյա հասակում կերտած «Սև-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

ծովյան նավատորմը Թեոդոսիայում» գործից։ Պատկերում նա վերադառնում է դեպի իր մանկական տարիները, հատկապես 1846 թվականը։ Այդ թվականին լրանում էր Այվազովսկու նկարչական գործունեության տասը տարին և տոնակատարության ժամանակ նկարչին մեծարելու համար Թեոդոսիա էին եկել Սևծովյան նավատորմի վեց ռազմանավեր՝ Վ. Ա. Կոռնիլովի գլխավորությամբ։

Ռուսական ռազմա-ծովային նավատորմին նվիրված պատկերներում Այվազովսկուն ոգեշնչում էին ռուս ծովայինների չտեսնված քաջությունն ու հայրենասիրության բարձր զգացմունքը։

Այվազովսկու լավագույն մարտանկարչական կտավները կապված են սուլթանական Թյուրքիայի դեմ ռուս ժողովրդի մղած հերոսական պայքարի հետ, Թյուրքիայի, որն Արևմտյան պետությունների, առաջին հերթին Անգլիայի, թելադրանքով ու օգնությամբ ձգտում էր իրականացնել իր նվաճողական այն պլանները, որոնք ուղղված էին ռուսական նավատորմի հզորությունը խորտակելու, Ռուսաստանի հարավային մարզերը, այդ թվում նաև Ղրիմը, նվաճելու նպատակին։ Այդ առիթով նկարիչն ասել է. «Մեր զորքերի՝ ցամաքում թե ծովում տարած յուրաքանչյուր հաղթանակ ինձ, որպես հոգով ռուսի, հրճվանք է պատճառում, և որպես նկարչի՝ միտք ներշնչում դրանք պատկերելու կտավի վրա»։

Դրա հետ միաժամանակ Այվազովսկին, միշտ էլ ծանր վերապրելով Թյուրքիայում հալածանքների ու մասսայական բնաջնջման ենթակա հայերի վիճակը, թյուրքականի դեմ ռուսական նավատորմի տարած հաղթությունները պատկերող իր կտավներով կատարում էր իր հայրենասիրական պարտքը նաև իբրև մի հայ, որը սիրում ու օգնում է իր հարազատ ժողովրդին։

Այդ նկարները կերտված են մեծ տեմպերամենտով ու ոգեշնչմամբ։ Դրանցից՝ «Չեսմենի ծովամարտը», «Նավարինի ծովամարտը», «Մերկուրի» բրիգը՝ գրոհի ենթարկված թյուրքական երկու նավերի կողմից» գործերը առանձնահատուկ տեղ են գրավում ոչ միայն Այվազովսկու ստեղծագործությունների, այլև ամբողջ ռուսական գեղանկարչության մեջ։ «Չեսմենի ծովամարտը» պատկերում է ռուսական նավատորմի պայքարը թյուրքականի դեմ՝ Փոքր Ասիայի ափերի մոտ։ 1870 թվականի հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը ռուսական նավերի մի ջոկատ մտնում է Չեսմենի ծովախորշը, ուր նահանջել էր թյուրքական նավատորմը։ Ճակատամարտն սկսում են

ռուսական նավերը և շուտով նրանց միահամուռ հարվածների տակ ծովախորշը ծածկվում է հակառակորդի այրվող նավերով։ Թշնամու նավատորմը, որի կազմում կային 15 խոշոր նավ, 6 ֆրեգատ և մինչև 50 մանր նավեր, ոչնչացվում է։ Այվազովսկին իր կտավում պատկերել է հրդեհի պահը։

«Նավարինի ծովամարտը» նշանավոր գործում Այվազովսկին

Նկ. 2

Նավարինի ծովամարտը

պատկերել է 19-րդ դարի ծովային խոշորագույն ճակատամարտը, որտեղ ոչնչացվեց թյուրքական նավատորմը։ Այդ՝ 1827 թվականի հոկտեմբերի 28-ին էր (նոր տոմարով)։ Ռուսական էսկադրայի գործողություններն ամբողջ աշխարհին ստիպեցին հիանալ՝ այդ մարտում փառքով իրենց պսակած ռուս ծովայինների համարձակությամբ, մարտական կայուն սառնասրտությամբ ու արվեստով։ «Ազով» ադմիրալական նավը, որի հրամանատարն էր հետագայում հռչակավոր ադմիրալ Լազարևը, միանգամից մարտի է բռնվում թշնամու հինգ նավերի հետ։ Չնայած ուժեղ վնասվածքներին, «Ազո-

վը» մարտի ընթացքում շրասույզ է անում երեք նավ, ծանծաղուտի մեջ է խրում մեկ գծանավ, ինչպես նաև ոչնչացնում թյուրքական ադմիրալական մեկ ֆրեգատ։

«Մերկուրի» բրիգը՝ գրոհի ենթարկված թյուրքական երկու նավերի կողմից» կտավը պատկերում է այն պահը, երբ 1829 թվականի մայիսի 14-ին Բոսֆորի ափերի մոտ «Մերկուրի» փոքր բրիգի ետևից վրա են հասնում հակառակորդի երկու խոշոր նավեր։

Բրիգի անձնակազմը վճռում է բրիգը խփել թշնամու նավերից մեկին, պայթեցնել այն, իրենց էլ զոհել, բայց անձնատուր չլինել։ Թյուրքական երկու նավերը դասավորվում են «Մերկուրիի» երկու կողմից և անձնատուր լինելու նրանց առաջարկին ի պատասխան բրիգի բոլոր հրանոթներից ու հրացաններից նրանց վրա կրակ են տեղում։ Սկսվում է մարտը։ Հենց այդ պահն էլ պատկերել է Այվազովսկին։

«Մերկուրին» ամբողջովին ջարդվում է, առագաստները պատառոտվում են, բռնկվում է հրդեհ, նավակողերի ճեղքերից սկսում է թափանցել ջուրը, սակայն ռուս ծովայինները 6 ժամ շարունակում են մարտը։ Բրիգից հաջող կրակոցներով թյուրքական նավերից մեկին այնպիսի վնասվածքներ են հասցնում, որ նա ստիպված է լինում ետ մնալ ու անցնել դրեյֆի։ Մարտը շարունակվում է և կարճ ժամանակից հետո երկրորդ նավն էլ խփվում ու շարքից հանվում։

Ճակատամարտից հետո «Մերկուրին» բարեհաջող կերպով միանում է ռուսական էսկադրային։

Այվազովսկու ճակատամարտային թեմաներով գործերը հանդիսանում են նկարչի մեծ ներդրումը ռուսական արվեստի մեջ։ Հայրենասեր նկարիչը ռուսական գեղանկարչության մեջ առաջինը նպատակ դրեց պատկերել ռուսական նավատորմի պանծալի հաղթությունները, ընդ որում նա իր նպատակն իրականացրեց իրեն հատուկ փայլուն վարպետությամբ ու գեղանկարչական կուլտուրայով։

Բնակություն հաստատելով Թեոդոսիայում, Այվազովսկին չի կտրվում մնացած աշխարհից։ Զմեռը նա անց է կացնում Պետերբուրգում կամ ռուսական ու եվրոպական այլ քաղաքներում։ Նկարիչը կանգ չի առնում իր ստեղծագործական աճի մեջ, այլ, ընդհակառակը, ավելի է առաջադիմում։

19-րդ դարի երկրորդ կեսի ռուսական արվեստում հաղթանակում է ռեալիստական ուղղությունը։ Պերեդվիժնիկներ Կրամսկոյը, Ռեպինը, Սուրիկովը և շատ ուրիշներ իրենց արվեստն ի սպաս են դնում ժողովրդին և այն պրոպագանդում լայն մասսաների մեջ։ Այդ նպատակով ռուս առաջադեմ նկարիչները կազմակերպում են «Շրջիկ ցուցահանդեսների ընկերություն», այստեղից էլ նրանց՝ պերեդվիժնիկներ կոչումը։ Պերեդվիժնիկների ամենամյա ցուցահանդեսները սովորաբար հանդիսանում էին խոշոր ու հասարակությանը հուզող իրադարձություն։ Դա մի հզոր դեմոկրատական շարժում էր ռուսական կերպարվեստում։ Ռուս մեծ գրող Սալտիկով-Շչեդրինը պերեդվիժնիկների 1871 թվականի առաջին ցուցահանդեսի առիթով գրել է՝

«Ուրեմն սրանից հետո ռուսական արվեստի ստեղծագործությունները, որոնք մինչև այժմ պարփակված էին միմիայն Պետերբուրգում՝ Գեղարվեստական Ակադեմիայի չորս պատերի մեջ, կամ թաղված էին անհատ մարդկանց սրահներում ու թանգարաններում, մատչելի կդառնան ռուսական կայսրության առհասարակ բոլոր բնակիչների համար։ Արվեստը դադարում է գաղտնիք լինելուց, դադարում է անվանիներին ոչ անվանիներից տարբերելուց...»։

Այվազովսկին, պերեդվիժնիկների հետ կազմակերպորեն կապված չլինելով հանդերձ, ռուս նկարիչներից առաջինն էր, որ սկսեց իր գործերը լայնորեն ցուցադրել ոչ միայն Պետերբուրգում, Մոսկվայում և արտասահմանում, այլև այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Թեոդոսիան, Սիմֆերոպոլը, Խարկովը, Կիևը, Խերսոնը, Օդեսան, Նիկոլաևը և այլն։

Ոչ պակաս կարևոր է այն փաստը, որ ցուցահանդեսների մուտքի վճարից ստացված միջոցները Այվազովսկին սովորաբար հատկացնում էր հասարակական կարիքներին, ինչպես նաև հասարակության աղքատ խավերին պատկանող ուսանող երիտասարդությանն օգնություն ցույց տալու համար։

Այսպիսով, Այվազովսկու ստեղծագործությունները, ճիշտ այնպես, ինչպես և պերեդվիժնիկների ստեղծագործությունները, մատչելի դարձան բազմաթիվ դիտողների համար։ Սակայն միայն դրանում չի կայանում Այվազովսկու ընդհանրությունը պերեդվիժնիկների հետ։ Նրա խորապես հուզական, հայրենասիրական, կյանքի ճշմարտությանը ծառայող արվեստն ինքնին նրան դնում է ռուս հռչակավոր պրոգրեսիվ նկարիչների շարքը։

Այվազովսկու վաղ երկերում երբեմն կարելի է հետապնդել ակադեմիզմի որոշ գծեր, բայց՝ միայն որոշ գծեր։ Սակայն հենց այդ երկերում էլ արդեն առկա են առողջ ռեալիստական աշխարհզգացումն ու գեղարվեստական միջոցների այնպիսի առանձնահատկությունները, որոնք բոլորովին տարբեր են այն ամենից, ինչ մենք տեսնում ենք ակադեմիստների արվեստի մեջ։ Խոսքը մասնավորապես վերաբերում է Այվազովսկու աշխատանքների գունային գամմային, որն աչքի է ընկնում իր պայծառությամբ ու ինտենսիվությամբ, ինչպես նաև լուսավորման կոնկրետ աղբյուրի առկայությանը, մինչդեռ ակադեմիստների աշխատանքներում լույսը գրեթե միշտ ցրված է։

Զարգացնելով իր արվեստի այդ առանձնահատկությունները, Այվազովսկին արդեն 19-րդ դարի 40-ական թվականներին հանդում է գեղարվեստական բոլորովին նոր որակի և նրա ստեղծագործությունը, իր հիմքում առաջվա նման ունենալով ռեալիստական աշխարհզգացում, ձեռք է բերում վառ արտահայտված ռոմանտիկական գծեր։ Նրա ստեղծագործության հիմնական մոտիվներն են դառնում բնության տարերային ուժերը և մարդու պայքարը տարերքի դեմ։ Ընդ սմին երևակայական տարրը, իհարկե, հիմնված ռեալ ուսումնասիրությունների վրա, ավելանում է, կոլորիտը դառնում է ավելի թանձր ու հագեցած, լույսի և ստվերի կոնտրաստներն ավելի ընդգծված, բայց և ավելի օրգանապես կապված պատկերի ընդհանուր մտահղացման ու նրա գունային միջավայրի հետ։ Այվազովսկու ստեղծագործության այդ շրջանի կուլմինացիոն կետը հանդիսացավ մեր կողմից արդեն հիշատակված «Ինները ալիքը»։

Սակայն ռեալիստ Այվազովսկու երբեք չդադարող էվոլյուցիան, բնականաբար, պետք է զարգանար նկարչի արվեստի ռեալիստական հիմքերի է՛լ ավելի լրիվ բացահայտման ուղղությամբ, է՛լ ավելի նպատակահարմար գեղարվեստական ձևերում նրանց մարմնավորման ուղղությամբ։

Եվ ահա 1850—1860 թ. թ. աշխատանքներում մենք կարող ենք նշել մի շարք պեյզաժներ, որոնք Այվազովսկուն ընդհուպ մոտեցնում են իդեական ռեալիզմի վարպետներին։ Այսպիսիք են, օրինակ, «Զումակների գումակը», «Ուկրաինական պեյզաժ», Ղրիմի և Հայկական մի շարք ժանրային տեսարաններ ու պեյզաժներ և այլն։

Պերեդվիժնիկների արվեստի հետ անմիջական մոտիկության

մեջ գտնվող այդ երկերում, ինչպես նաև հետագա տարիների ծովանկարներում (որոնք նույնպես խորթ չեն պերեդվիժնիկներին և դրա համար էլ նրանց կողմից հիացմունքով են դիմավորվել), Այվազովսկու ռեալիստական արվեստը մեր առաջ կանգնում է իր ամբողջ հարստությամբ ու ճշմարտացիությամբ։ Նրանց մեջ բնությունն ու մարդիկ դիտված ու պատկերված են ավելի ռեալ ու անմիջական կերպով, մոլեգնող տարերքը շատ գործերում իր տեղը զիջել է բնության խաղաղ, ամենևին ոչ արտակարգ դրությանը, բոսոր մայրամուտներն ու արշալույսներն ավելի և ավելի հազվադեպ են հանդիպում, սակայն դրա փոխարեն ավելի հաճախ է հանդիպում ծովը օրվա սովորական պահերին։ Նոր բովանդակության համապատասխան էլ փոխվում է գունային գամման, ուժեղ կոնտրաստները մեղմանում են, գեղանկարը դառնում է տոներով ավելի զուսպ, հանդես է գալիս օդային հեռանկարը, որն է՛լ ավելի մեծ բնականություն է հաղորդում տարածական լուծումներին։

Այվազովսկու առավել նշանակալից ռեալիստական գործերի թվին են պատկանում «Սև ծովը», «Ալիքների մեջ», ինչպես նաև «Անդորր»-ը, որի մասին մենք կխոսենք առանձին, Հայաստանի Պետական պատկերասրահի նմուշների առնչությամբ։ Նկարիչը «Սև ծովը» նկարել է արդեն պատկառելի հասակում՝ 1881 թվականին։ Այն արժանացել է ամենապահանջկոտ քննադատների հիացմունքին։ Պերեդվիժնիկների պարագլուխը՝ հայտնի դիմանկարիչ Ի. Ն. Կրամսկոյը այդ պատկերի առթիվ գրել է. «Պատկերում, բացի երկրնքից ու ջրից, ոչինչ չկա, սակայն ջուրը՝ դա օվկիանոսն է անհուն, ոչ փոթորկալից, բայց ծփացող, խիստ անսահման, իսկ երկինքը է՛լ ավելի անսահման։ Այդ՝ իմ գիտեցածների մեջ ամենավեհատեսիլ պատկերներից մեկն է...», և ապա՝ շատ նկարիչներ «հիացած էին այդ պատկերի իմաստով և վեհաշուք պոեզիայով»։

Այվազովսկին «Ալիքների մեջ» կտավը վրձինել է իր կյանքի 81-ամյա հասակում։ Դիտողին այդ պատկերը զարմացնում է իր կատարողական վարպետությամբ և ուրախ, օպտիմիստական տրամադրությամբ։ Այդտեղ պատկերված է ծովը, որը փոթորկից հետո դեռ չի հանդարտվել։ Երկնքում քուլա-քուլա գալարվող ամպերի միջից դուրս է ցայտել արևի մի ճառագայթ, որը ճեղքել-անցել է վեր խոյացած, սահող ալիքները։ Արևի այդ ճառագայթն ամբողջ

պատկերը լցնում է այն լավատես հույսով ու հավատով, որ լույսը հաղթում է ամեն մի մռայլ և քաոսային տարերքի։

Այսպիսով, մեծ ծովանկարիչը հանդես է գալիս ոչ միայն որպես անզուգական վարպետ, այլև որպես խոշոր մտածող։

Զարգացնելով ռուսական առաջադեմ արվեստի տրադիցիաները, Այվազովսկին չի սահմանափակվում գեղարվեստական ցուցահանդեսներին իր ցուցաբերած մասնակցությամբ կամ Ռուսաստանի զանազան քաղաքներում ու արտասահմանում իր նկարների անհատական ցուցահանդեսների կազմակերպմամբ։

1880 թվականին Այվազովսկին Թեոդոսիայում իր տանը կից կառուցում է մի պատկերասրահ, որտեղ պարբերաբար ցուցադրում է իր բոլոր նոր գործերը՝ նախքան ցուցահանդես ուղարկելը։ Սրահը բաց էր բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում էին մեծ ծովանկարչի երկերով։ Այդ հիանալի ցուցահանդեսային դահլիճն էին այցելում ոչ միայն տեղի բնակիչները։ Ռուսաստանի զանազան ծայրամասերից այստեղ էին գալիս հարյուրավոր մարդիկ, որպեսզի դիտեն, ինչպես արժանի կերպով կոչում էին Այվազովսկուն նրա ժամանակակիցները, սիրելի «ծովի երգչի» պատկերները։

Սրահում շարունակ Այվազովսկու շուրջն էին հավաքվում երիտասարդ նկարիչները՝ նրա աշակերտները, ինչպես նաև տարբեր վայրերից ժամանած արվեստի նշանավոր գործիչներ։ Նկարչի կենդանության ժամանակ սրահը ոչ միայն նոր պատկերների ցուցադրման դահլիճ էր կամ նրա բազմաթիվ աշակերտների արվեստանոցը։ Այն նաև ծառայում էր Թեոդոսիացիների համար որպես թատրոն, ավելի ճիշտ՝ որպես համերգային դահլիճ։ Եթե հաշվի առնենք, որ սրահի հիմքը դրվել է անցյալ դարի 80-ական թվականներին մոլեգնող ցարական ռեակցիայի ժամանակ, երբ Ա. Պ. Չեխովի խոսքերով ասած՝ «Վախենում էին բարձր խոսել, նամակներ ուղարկել, միմյանց հետ ծանոթանալ, գրքեր կարդալ, վախենում էին թշվառներին օգնել, գրագիտություն սովորեցնել», ապա՝ Այվազովսկու կողմից այդ գեղարվեստական հիմնարկի ստեղծման փաստը, որը կոչված էր ծառայելու արվեստի պրոպագանդման և ժողովրդի գեղագիտական դաստիարակության գործին, ինքնստինքյան մեծ նկարչի համարձակ ու ազնիվ գործերից մեկն էր։

75 տարի սրանից առաջ Թեոդոսիայում ստեղծված Այվազովսկու պատկերասրահը, որպես ռուսական ու համաշխարհային արվեստի հազվագյուտ գանձարան, այժմ հայտնի է մեր երկրի սահմաններում ու նրանից դուրս գտնվող միլիոնավոր մարդկանց։ Ներկայումս այնտեղ պահպանված են Այվազովսկու 389 և ուրիշ նկարիչների մոտավորապես 1700 գործեր։

Այվազովսկին հայ ժողովրդի զավակն էր և իր ամբողջ կյանքի ընթացքում նա շեշտել է, որ պատկանում է իր ժողովրդին, ցավակցել է նրա բոլոր տառապանքներին։ Որպես նկարիչ և մարդ՝ Այվազովսկին անում էր ամեն հնարավորը հայ ժողովրդի վիճակը թեթևացնելու համար։ Նրան միշտ ուրախացնում ու հուզում էր այն օգնությունը, որ զանազան անձանց կամ կազմակերպությունների կողմից ցույց էր տրվում հայ բնակչությանը։ 1858 թվականի հուլիսի 18-ին Նախիջևանում ապրող իր մերձավոր բարեկամին ուղարկած նամակում նա գրում է. «Ես, ինչպես նաև մեր ազգի յուրաքանչյուր անդամ, իմ պարտքն եմ համարում շնորհակալություն հայտնել Ձեզ, մեր թշվառ ժողովրդին այնքան շատ օգուտ մատուցելու վերաբերյալ Ձեր պատրաստակամության համար»[1]։

1877—78 թվականների ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ Այվազովսկին նշանակալից նյութական օգնություն է ցույց տալիս գաղթական հայերին։ Նա Թեոդոսիայի մոտ գտնվող իր կալվածքում պատսպարում է մի քանի տասնյակ հայ ընտանիք, յուրաքանչյուր ընտանիքի հատկացնելով հողաբաժին։

Մեծ նկարչին ծանր վերապրումներ է պատճառում Թյուրքիայում 1895—96 թվականներին կազմակերպված հայերի կոտորածը։ Նա 1896 թ. սեպտեմբերի 8-ին գրում է Թեոդոսիայից Հայաստան՝ «Այո, խորին կսկիծով վշտացած է իմ սիրտն անբախտ հայոց ջարդված, չտեսնված կոտորածից»[2]։

Լայնորեն հայտնի է Այվազովսկու ելույթը թյուրքերի կիրառած գազանությունների դեմ։ Նա նկարել է «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին», «Թյուրքերը հայերին բարձում են նավը», «Թյուրքերը հայերին թափում են Մարմարի ծովը» պատկերները,

---

[1] Նամակը պահվում է Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրական թանգարանի ֆոնդում։

[2] Նամակը պահվում է Հայկական ՍՍՌ Պետ. Արխիվում։

որոնք ցուցադրել է Ռուսաստանում և արտասահմանում։ Այդ պատկերներն առաջացնում են ռուսական ու համաշխարհային հասարակության բուռն ռեակցիան՝ թյուրքական արյունարբու ռեժիմի դեմ։ Միևնույն ժամանակ Այվազովսկին իր անձնական միջոցներից նյութական լայն օգնություն է ցույց տալիս Թյուրքիայից գաղթած հայերին։

Ռուսաստանում և արտասահմանում հայ հասարակայնությունը հարգանքի և շնորհակալության խորը զգացմունքներ էր տածում դեպի Այվազովսկին, հիանում և պարծենում էր հայրենասեր արվեստագետով։

Հայ ժողովրդի սերը իր հանճարեղ զավակի նկատմամբ առանձնապես լայնորեն դրսևորվեց Այվազովսկու գեղարվեստական գործունեության 50-ամյակի կապակցությամբ կազմակերպված հանդիսավոր մեծարման օրերին։ Այդ օրերին (մեծարումը տեղի է ունեցել 1887 թվին) նկարչի անունով ստացվում են բազմաթիվ ուղերձներ ու հեռագրեր ռուսական և արտասահմանյան հասարակայնությունից, Պետերբուրգի, Մոսկվայի, Բաքվի, Թիֆլիսի, Ռուսաստանի և արտասահմանի բազմաթիվ այլ քաղաքների հայերից։

Գեղարվեստական ակադեմիայում Այվազովսկու մեծարման ժամանակ Պետերբուրգի հայերի պատգամախումբը հոբելյարին նվիրաբերում է արծաթե և էմալե նախշերով զարդարված սև փայտից նկարչաձող և արծաթե մասսիվ երանգապանակ, որի վրա պատկերված էր Արարատը։

Նվերները հանձնելիս, նրանք ընթերցել են Պետերբուրգի հայերի ուղերձը, որտեղ ասված էր. «Դուք միս ու արյուն եք առել հայ ժողովրդից։ Ընդունեցեք ձեր պետերբուրգյան հայրենակիցներից, ընդսմին արվեստի ձեզ մատուցվող այս պիտույքները, որոնցով դուք պանծացրել եք ձեզ և ձեր ազգը»։ Նույն ուղերձում ընդգծված էր՝ «Ձեր աշխատավորական կյանքի, ձեր հաջողությունների և համաշխարհային փառքի այս ողջ հիսուն տարիների ընթացքում դուք միշտ հանդիսացել եք պարծանքը այն ժողովրդի, որի ծոցից դուք ծնվել եք»։

Մյուս բազմաթիվ ուղերձներում և հասցեներում հայ հասարակայնությունը Այվազովսկուն ցանկանում էր արդյունավոր գործունեություն՝ «ի փառս և ի պատիվ Ռուսաստանի և համայն հայության» (Մոսկվայի հայերի հեռագրից)։

Բոլոր այս ջերմ շնորհավորանքները, անտարակույս, խոսում են այն կենդանի և անմիջական կապերի մասին, որոնք գոյություն ունեին Այվազովսկու և հարազատ ժողովրդի միջև։

Այվազովսկին նշանավոր տեղ է գրավում հայկական կուլտուրայի զարգացման ասպարեզում։ Լինելով բարձր կուլտուրայի տեր մարդ, որը լավ գիտեր ռուսական ու համաշխարհային գրականությունն ու արվեստը, նա լավ գիտեր նաև հայկական կուլտուրան ու ձգտում էր պրոպագանդել նրա նվաճումները։ Այն բանում, որ Պետերբուրգի ու Մոսկվայի ռուս հասարակայնության կողմից այնքան լավ է ընդունվել հայ մեծ տրագիկ Պետրոս Ադամյանը, իր վաստակն ուներ նաև Այվազովսկին։ Նկարիչը հպարտանում ու հիանում էր իր ազգակցի անբասիր տաղանդով և նպաստում նրա ժողովրդականացմանը։ Սրտագին, անկեղծ բարեկամությունն էր միմյանց կապում հայ ժողովրդի այդ երկու զավակներին։ Ինքը՝ Պետրոս Ադամյանը մեզ թողել է հակիրճ, սակայն խոր զգացմունքներով համակված հիշողություններ Այվազովսկու հետ ունեցած իր հանդիպումների մասին։ Ադամյանը, որն զբաղվում էր նաև գեղանկարչությամբ, երփնագրել է Այվազովսկու դիմանկարը։ Այդ դիմանկարը պահվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Թատերական թանգարանում։ Այնտեղ է պահվում նաև Այվազովսկու լուսանկարը, որ նա նվիրել է Ադամյանին։

Է՛լ ավելի մոտ հարաբերությունների մեջ են եղել Այվազովսկին ու երիտասարդ Սպենդիարյանը։ Այվազովսկին ճանաչում էր Սպենդիարյանին նրա դեռ մանուկ հասակից։ Այդ մասին կոմպոզիտորը հիշել է իր «Ինքնակենսագրության» մեջ։ Ավելի ուշ, երբ Սպենդիարյանն ամուսնանում է Այվազովսկու ազգականուհու՝ Վ. Լ. Մազիրովայի հետ, նկարիչը և կոմպոզիտորը սերտորեն ընկերակցում են և ամառները միմյանցից գրեթե չեն բաժանվում։ Սուդակում, Թեոդոսիայից ոչ հեռու, նրանց ամառանոցները կողք-կողքի էին։ Այվազովսկու թոռը՝ Կ. Կ. Արցեուլովը իր հուշերում հաղորդում է այն մասին, թե ինչպես երիտասարդ Սպենդիարյանը հաճախ լինում էր Այվազովսկու մոտ՝ Սուդակի ամառանոցում։ Նա բերում էր իր ստեղծագործությունները և Այվազովսկու հետ միասին երաժշտու-

թյամբ էին զբաղվում, կոմպոզիտորը՝ դաշնամուրի, իսկ նկարիչը՝ ջութակի վրա։

Սպենդիարյանը Այվազովսկու հետ հանդիպումներ է ունենում ոչ միայն Սուդակում, այլ նաև Թեոդոսիայում ու Պետերբուրգում։ Թեոդոսիայում, Այվազովսկու պատկերասրահի բեմում, հաճախ ելույթներ էին ունենում հայտնի երաժիշտներ ու դերասաններ։ Դրանց մեջ եղել է նաև Սպենդիարյանը։ Այվազովսկու մահից հետո Սպենդիարյանը գրում է «Ղրիմի էսքիզներ» սյուիտը, որը նվիրում է Այվազովսկու հիշատակին և առաջին անգամ կատարում նկարչի հայրենի քաղաքում՝ Թեոդոսիայում։

Այվազովսկի-մարդու հմայիչ կերպարն են տպավորել իրենց հուշերում հայ գրող Ղ. Աղայանը, ՀՍՍՌ ժող. արտիստ Ա. Արմենյանը և ուրիշները։ Իր բանաստեղծություններում Այվազովսկու պատկերներն է գովերգել հայ խոշորագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը։ Ահա այդ բանաստեղծություններից մեկը, որը կոչվում է «Այվազովսկու նկարի առջև».

Ելած՝ օվկիանի անդունդ ալիքներ
Ծանր հորձանքով զարկելով դեպ վեր
Լեռնանում էին գոռալով ահեղ
Եվ մրրիկն ուժգին շնչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածության մեջ։
«Կանգնեցեք», գոչեց վրձինը ձեռքին
Կախարդ ծերունին հուզված տարերքին.
Ու լուռ, հնազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները փոթորկի ժամին
Կտավի վրա
Կանգնած են ահա։

(1894 թ.)

Վկայություն կա, որ Հովհաննես Թումանյանը Այվազովսկու մասին նաև գրել է մի հետաքրքիր հոդված։

Այվազովսկին շատ բան է արել հայկական գեղանկարչության զարգացման և հայկական ու ռուսական արվեստների միջև եղած կապերն ամրապնդելու համար։ Հայտնի են Այվազովսկու հայկական թեմաներով «Արարատ լեռան հովիտը», «Սևանա լիճը», «Հայ ռազմիկի երդումը», «Խրիմյան Հայրիկն էջմիածնի շրջակայքում», «Հայ ժողովրդի մկրտությունը», «Բայրոնը Մխիթարյանների մոտ» և ուրիշ գործեր։ Նրա նկարներից շատերը ստորագրված են հայերեն՝ «Այվազյան»։ Այվազովսկու՝ Թեոդոսիայի արվեստանոցում եղած աշակերտների մեջ կային նաև հայեր։ Հայտնի ծովանկարիչ Է. Մահտեսյանն իր ստեղծագործական աճի խնդրում շատ բանով պարտական է Այվազովսկուն։ Այվազովսկին նրա նկատմամբ մշտական հոգատարություն է հանդես բերել և նրա ձեռք բերած հաջողությունների մասին հաղորդել է Պետերբուրգ՝ Գեղարվեստի ակադեմիա։ Մահտեսյանը, ինչպես և նշանավոր նկարիչ Գ. Բաշինջաղյանը Այվազովսկու մասին հիշատակել են իբրև իրենց ուսուցչի։

Նկ. 5
Արարատ լեռան հովիտը

Այվազովսկին մեծ հետք է թողել Վ. Սուրենյանցի կյանքում։ Սուրենյանցի մանկական տարիներն անցել են Ղրիմում։ Նա այն ժամանակ արդեն հաճախ էր տեսնում Այվազովսկուն, որը նրա ընտանիքի հետ կապված էր հեռավոր բարեկամական կապերով։ Այվազովսկին փոքրիկ նկարչին նվիրել է նրա կյանքում առաջին ներ-

կերը։ Վ. Սուրենյանցը հաճախ է հիշատակել այդ մասին, դրա մեջ տեսնելով փառաբանված նկարչի օրհնությունը՝ ստեղծագործական սխրագործության համար։ Հետագայում Սուրենյանցը հաճախ է հանդիպում Այվազովսկու հետ Պետերբուրգում, Մոսկվայում և նրա հետ ավելի ևս մտերմանում։ Սուրենյանցն Այվազովսկուն է նվիրել Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի իլյուստրացիաների մինչև այժմ չգերազանցված իր հոյակապ սերիան։ Այվազովսկին Սուրենյանցին հաղորդակից էր դարձնում իր ամենանվիրական խոհերին։ Այսպես, արդեն Այվազովսկու մահից հետո Սուրենյանցը հիշատակում է, որ մեծ ծովանկարիչը երազում էր հիմնել հայ նկարիչների ընկերություն։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Այվազովսկու և Վ. Մախոխյանի փոխհարաբերությունները։ Մախոխյանը, որն ապրում էր արտասահմանում և ճանաչված էր որպես ականավոր ծովանկարիչ, մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի ռուսական գեղանկարչությունը և գլխավորապես դեպի Այվազովսկու ստեղծագործությունը։ 90-ական թվականներին նա գալիս է Ռուսաստան։ Հայտնի է, որ ռուսական բնությունն նրան ոգեշնչում է՝ «Ձմեռը ռուսական գյուղում» պատկերի համար։ Մախոխյանը Թեոդոսիայում այցելում է Այվազովսկուն, և պետք է ենթադրել, որ այդ հանդիպումը նրա համար անհետևանք չի անցել։

Բնորոշ է այն հանգամանքը, որ հայ նկարիչների մեջ ծովանկարիչները շատ են։ Դրանում անպայման իրենց դերն են խաղացել Այվազովսկու օրինակն ու համաշխարհային փառքը։ Մի շարք դեպքերում նոանց ստեղծագործության մեջ այս կամ այն չափով զգացվում է Այվազովսկու անմիջական ազդեցությունը։ Ի դեպ, այդ ազդեցությունը երևան է գալիս ոչ միայն ծովանկարիչների ստեղծագործություններում։

Այվազովսկին հայ նկարիչներին օգնում էր ռուսական գեղանկարչության փորձը յուրացնելու և ռուս ժողովրդի ու նրա կուլտուրայի հետ իրենց կապերն ամրապնդելու գործում։

Այվազովսկին մեծ քաղաքացի էր։ Նա շատ բան է արել հարազատ քաղաքի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար. օժանդակել է Թեոդոսիա երկաթգիծ անցկացնելուն, նավահանգստի և մի ամբողջ շարք հասարակական շենքերի կառուցմանը, իրեն կալվածքից ջրմուղ է տարել քաղաքի համար։ Իր պատկերասրահը նա

կտակել է հայրենի քաղաքին։ Մինչև այժմ Թեոդոսիացիները հանձին նրա հիշում են ոչ միայն այնպիսի մի նկարչի, որ փառք է բերել հարազատ քաղաքին, այլև այնպիսի հայրենասերի, որը Թեոդոսիայի բարեկարգման համար նյութական շատ միջոցներ և ուժ է հատկացրել։

Այվազովսկին մեռավ 1900 թվականի մայիս 2-ին, Թեոդոսիայում[1]։ Նկարչի հարազատներն ու մերձավորները և երախտագետ համաքաղաքացիները նրա տապանաքարի վրա հայերեն փորագրել են տվել՝ «Մնեալ մահկանացու, անմահ զիւրն յիշատակ եթող»։ Դրանով իսկ նրանք արտահայտել են մեծ նկարչի և մարդու նկատմամբ ոչ միայն իրենց, այլև բոլոր նրանց տածած զգացմունքները, ովքեր թեկուզ մեկ անգամ տեսել են նրա հմայիչ կտավները։

Սովետական Թեոդոսիայի բնակիչները Այվազովսկու մահվան երեսնամյա տարելիցի կապակցությամբ նրա տան մոտ 1930 թվականին կանգնեցրին իրենց մեծ համաքաղաքացու հուշարձանը։

Այվազովսկին անցել է արվեստագետի փայլուն ուղի՝ շրջապատված համաշխարհային փառքով։ Նրա ստեղծագործությունները հայտնի են յուրաքանչյուր կրթված մարդու։ Նա գեղարվեստի վեց ակադեմիաների անդամ էր, նրա ինքնանկարը գտնվում է Ֆլորենցիայում՝ Պիտտիի պալատի այն սրահում, որտեղ գտնվում են աշխարհի հռչակավոր նկարիչների, այդ թվում Օ. Ա. Կիպրենսկու, Ի. Ե. Ռեպինի ու Գ. Ի. Սեմիրադսկու դիմանկարները։

Այվազովսկու աշխատանքները ցրված են ամբողջ աշխարհում մեկ. նրանք կան ՍՍՌՄ-ի գրեթե յուրաքանչյուր գեղարվեստական թանգարանում։ Նրա ստեղծագործությունների առավել լրիվ հավաքածուն գտնվում է Թեոդոսիայի՝ Այվազովսկու անվան տուն-թանգարանում։ Այդ թանգարանն ամեն տարի այցելում են տասնյակ հազարավոր մարդիկ Սովետական Միության զանազան քաղաքներից ու արտասահմանյան երկրներից։

Այվազովսկու շատ ստեղծագործություններ կան ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանյան հայկական գեղարվեստական հավաքածուներում։ Այդ գործերի մի մասն իր ժամանակին նկարիչն ընծայաբերել է զանազան անձանց, կուլտուրական կամ այլ հաստատությունների։

---

[1] Այդ օրը նա դեռ աշխատում էր «Նավի պայթյունը» պատկերի վրա, որն անավարտ մնաց։



Նկ. 4. Անդոր

Այդ բոլոր հավաքածուներից, անշուշտ, ամենից հարուստն ու ամենից արժեքավորը՝ Հայաստանի Պետական պատկերասրահի հավաքածուն է։ Մեծ ծովանկարչի այստեղ ներկայացված գործերի շարքում մենք հանդիպում ենք այնպիսի նշանավոր ստեղծագործությունների, ինչպիսիք են՝ «Անդորը», «Նեապոլի ծովածոցը մառախլապատ առավոտյան», «Հանդարտ ծովը», «Նավաբեկությունից փրկվողները», Թեոդոսիայի տեսարաններ և ուրիշ գործեր։

«Նավաբեկությունից փրկվողները» պատկանում է հեղինակի վաղ շրջանի գործերի թվին։ Այն վրձինվել է 1844 թվականին և որոշ չափով էլ նախորդում է «Իններորդ ալիքը» կտավի վրա հեղինակի կատարած աշխատանքին։ Արդեն այստեղ առկա են տարերքի դեմ մարդու պայքարի թեման, նրա հավատը հաղթության նկատմամբ, սյուժեի ռոմանտիկական աշխուժությունը և, վերջապես, այն կոլորիտի սկզբնական տարրերը, որն իր փայլուն և առավել լրիվ արտահայտությունն է ստացել «Իններորդ ալիքը» գործում։

Այվազովսկին հաճախ ու մեծ սիրով էր դիմում Նեապոլի ծովածոցի պատկերմանը։ Հայտնի է, որ նրա գործերից հենց «Նեապոլի ծովածոցը լուսնկա գիշերին» պատկերն իր ժամանակին առաջացրել է անգլիական հռչակավոր ծովանկարիչ Ջ. Տյորների հիացմունքը։

Հայաստանի Պետական պատկերասրահում գտնվող «Նեապոլի ծովածոցը մառախլապատ առավոտյան» պատկերը հեղինակը վրձնել է 1874 թվականին։ Այն շահավետ կերպով տարբերվում է նույն թեմայով հեղինակի կերտած մյուս պատկերներից ոչ միայն իր ռեալիստական արտահայտչականությամբ, այլև արտասովոր կատարողական վարպետությամբ։

Սակայն այս հավաքածուի մեջ ամենանշանակալից նմուշը պետք է համարել «Անդորը»-ը՝ իր չափերով պատկերասրահի ամենամոնումենտալ կտավը։ Այդ պատկերը նկարիչն ստեղծել է 1892 թվականին, այսինքն՝ իր ծերության հասակում, սակայն նրա մեջ բնության իմաստուն հայեցողի խաղաղության հետ միաժամանակ առկա է այնքա՞ն շատ թարմություն, երիտասարդական հիացմունք՝ բնության գեղեցկության հանդեպ, այնքա՞ն շատ ջերմություն ու հոգեկան նրբություն, որ այդ գործի մեջ հեղինակը մեր առաջ կանգնում է որպես դեռևս երիտասարդ, հոգեկան ուժով լի մի մարդ։

408—3

«Անդորր»-ում պատկերված է Միջերկրական ծովափը, խաղաղ, վեհաշուք, անսահման հեռուները ձգվող ծովը, իսկ նրա վրա օդը՝ արևի ջերմությամբ տոգորված։ Եվ այս ամենն այնպե՞ս ճշմարտացի, այնպե՞ս սրտաբուխ, որ ծովի երկնակամարագույն հայելու վրա արևի շողշողացող շերտն անգամ խոսում է կենդանի բնության վառ բնկալման ու վերարտադրման մասին։ Այստեղ ամեն ինչ նյութական է՝ և՛ ծովափը, և՛ ջուրը, և՛ նույնիսկ լույսով տոգորված օդը։ «Անդորր»-ի օրինակով կարելի է մեկ անգամ ևս համոզվել, որ Այվազովսկու հանճարը նույնիսկ նրա ութերորդ տասնամյակում դեռևս զարգանում էր, վարպետությունը կատարելագործվում, և նա իր արվեստի մեջ մնում էր այնպե՛ս երիտասարդ ու խիզախ, ինչպիսին եղել էր իր երիտասարդության օրերին։



Նկ 5
Հ. Կ. Այվազովսկու շիրիմը Թեոդոսիայում

Հայաստանի Պետական պատկերասրահում քիչ չեն Այվազովսկու գրաֆիկ աշխատանքները։ Դրանց մեջ կան առաջնակարգ նշանակություն ունեցող մի շարք նկարներ։

Պատկերասրահի էքսպոնատներից, վերջապես, հարկավոր է նշել Այվազովսկու՝ մեծ հետաքրքրություն ներկայացնող ջրաներկ դիմանկարը, որն Իտալիայում նկարել է Այվազովսկու բարեկամը՝ ռուս հայտնի նկարիչ Վ. Ի. Շտեռնբերգը։

* * *

Սովետական նկարիչների համար Այվազովսկու արվեստը հանդիսանում է ռեալիստական վարպետության մի սքանչելի դպրոց և հայրենիքին անձնվեր ծառայելու կենդանի օրինակ։ Սովետական նկարիչները, մեծ ծովանկարչի տրադիցիաները զարգացնելով, սիրով պատկերում են մեր երկրի ծովային տարածությունները, նրանց պաշտպանների հերոսական սխրագործություններն ու առօրյան։

Այվազովսկու նկատմամբ սովետական մարդկանց տածած զգացմունքներն ու սերը լավ և հուզումնալից կերպով է արտահայտել սովետական ականավոր ռուս բանաստեղծ Վլադիմիր Լուգովսկոյը իր՝ «Այվազովսկու պատկերասրահում» բանաստեղծության մեջ.

Ապրել է մի տղա,
հասակ առել,
դառել
հայտնի ողջ աշխարհին,
Թողել այն ամենը,
ինչ մեծին է վայել։
Եվ զենիթին հասնող
փառքը իր հանճարի
Դեպ եղերքն այս
ամայի՝
առն է բերել։
Մութում,
այգաբացին
ծովն է ալեկոծվել։
Եվ իր նավախմբով
Կոռնիլովին
Սևաստոպոլն ահեղ
ճանապարհ է բցել՝

Սալյուտ տալու
հարազատ
ծովի երգչին։
Ալի՜ք, ալի՜ք, ալի՜ք։
Մրրիկ։
Փոթորիկներ։
Արեգակի շողեր՝
ջրերը թափանցող։
Կարնան թեթև ծփանք։
Աշնան մառախուղներ։
Ծուխը հին մարտերի։
Լուսնի ցոլքեր թախծոտ։
Մարդկային կամք ըմբոստ
հպարտորեն ընկնող
ալիքների գրկում,
մռայլ ժայռերի մոտ։
Դեռ երեք ժամ առաջ
իր գեղեցիկ մահից
«Նավի պայթյունը»
ձեռքով վարժ
նա պատկերեց։
Եվ մահն էլ հանճարի
մահ չէր սովորական։
Նա եկավ լուռ,
նավի
առագաստի նման։
Ծովն է խաղաղ։
Գարուն։
Ճայն է կտրում օդը
իր թևերով։
Նա դեպի Սև ծովի
հեռուներն է նավում։
Աշխարհ,
մնաս բարո՜վ։

(Թարգմ. Վ. Հ.)

Այվազովսկին մոտիկ և թանկ է մեր երկրի բոլոր ժողովուրդների համար։ Մեր հայրենիքում տարեց-տարի աճում է հետաքրքրությունը դեպի մեծ նկարչի խորապես հայրենասիրական արվեստը։ Սովետական ժողովուրդը հպարտանում է Հ. Կ. Այվազովսկու անունով, մի արվեստագետի, որն իր անմահ ստեղծագործություններով հարստացրել է հայրենական և համաշխարհային արվեստը։

ՀՍՍՌ-Ամ Գ.Գ.
Լ. Ա. Մեսի
Կոմունիստական

2013

2001

2013

013

Թարգմ.՝ Ս. ԲԱԲԱՅԱՆ
Խմբագիր՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎՖ 11910 Պ. 408 Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 1955 թ. մայիսի 7-ին։
Ստորագրված է տպագրության 1955 թ. հունիսի 30-ին։
Տպագրական $2^1/_2$ մամուլ։ Հրատարակչական 2,1 մամուլ։

Հայկական ՍՍՌ Պետական Հեռակա մանկավարժական ինստիտուտի տպարան
Երևան, Տերյան փ. № 127

ՀՀ Ազգային գրադարան
NL0683690

ԱՆՎՃԱՐ 154.